

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Սևակ Շահբազյանի՝ «Ախտաբանական ճարպակալումով պացիենտների ստամոքսի երկայնակի մասնահատման մեթոդով բուժման առանձնահատկությունները եվ կյանքի որակի բարելավման ուղիները» թեմայով ԺԴ.00.15 «Վիրաբուժություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման նեկայացված ատենախոսության վերաբերյալ

Պաշտոնական ընդդիմախոս՝ ԵՊԲՀ կրծքային վիրաբուժության ամբիոնի պրոֆեսոր, Բ.Գ.Դ., պրոֆեսոր Արտակ Կառլենի Յովհաննիսյան

Հավելյալ քաշը և գիրությունը դասվում են հաշմանդամության և մահվան հանգեցնող ռիսկի գործոնների շարքին: ճարպակալումը բարձրացնում է բժշկական օգնության ծախսերը և վատթարացնում հիվանդների կյանքի որակը, ինչն էլ հանդիսանում է կարևորագույն պատճառներից մեկը, որ բարիատրիկ վիրաբուժությունը ժամանակակից վիրաբուժության առավել ակտիվ զարգացող ուղղություններից է: Ստամոքսի լապարոսկոպիկ երկայնակի մասնահատումը (ՍԼԵՄ) ներկայումս հանդիսանում է ամենաարդյունավետ և ամենահաճախակի կատարվող բարիատրիկ միջամտությունը: Չնայած վերջինիս լայն տարածվածությանը, այնուամենայնիվ դրա կիրառման բազմաթիվ ասպեկտներ մնում են անբավարար ուսումնասիրված:

Ատենախոսի կողմից նախաձեռնած հետազոտության նպատակն է ստամոքսի լապարոսկոպիկ երկայնակի մասնահատման եղանակով ախտաբանական ճարպակալումով պացիենտների կյանքի որակի բարելավման գիտական հիմանավորումը, ինչպես նաև, համակցված հիվանդություններով պայմանավորված մահացության ցուցանիշների նվազեցումը: Այն վերլուծում է 40կգ/մ²-ից բարձր ՄՁԻ ունեցող տարբեր խմբերի պացիենտների շրջանում ՍԼԵՄ-ի ստանդարտ և հեղինակի կողմից մոդիֆիկացված եղանակների կիրառման արդյունավետությունը: Աշխատանքի մեջ հստակորեն սահմանված են հետազոտության արդիականությունը, նպատակներն ու խնդիրները, գիտական նորույթը, գործնական նշանակությունը, հետազոտության նյութը և օգտագործված մեթոդները, կիրառված հետազոտական գործիքները, ստացված

արդյունքների վերլուծությունը և դրա հիման վրա ձևավորված եզրահանգումները և գործնական առաջարկները:

Հետազոտության շրջանակներում հետազոտվել, գնահատվել և համամատվել են ոչ միայն քաշի կորստի, այլ նաև համակցված հիվանդությունների արտահայտվածության, կյանքի որակը և հոգեբանական կարգավիճակը բնորոշող ցուցանիշները, ինչպես նաև վիրահատական միջամտության արդյունավետության վրա ազդող գործոնները: Ընտրանքի տարբեր խմբերի շրջանում ուսումնասիրվել են նաև ՍԼԵՄ-ի բնութագրիչները, առաջացած բարդությունների ցուցանիշները և բարիատրիկ վիրաբուժության վերաբերյալ դիրքորոշումը:

Ատենախոսական աշխատանքը պարունակում է Էական նորույթ թե՛ տեսական, թե՛ գործնական առումով: Մասնավորապես, հեղինակի կողմից առաջադրված վարման ալգորիթմի կիրառման շնորհիվ, պացիենտների բազմաքանակ ընտրանքի համալիր հետազոտությամբ ապացուցվել են ՄՁԻ-ի և կյանքի որակի ցուցանիշների առավել արտահայտված դրական տեղաշարժերը, ինչն էլ հանգեցրել է ճարպակալման կլինիկական դրսևորումների ամբողջ սպեկտրի հետզարգացումը:

Հետազոտության արդյունքները և հեղինակի կողմից տրված գործնական առաջարկությունները լայն կիրառություն կգտնեն բարիատրիկ վիրաբուժությունում, ինչը կհանգեցնի վիրահատական միջամտությունների կլինիկական արդյունավետության բարձրացմանը և բուժման ելքերի օպտիմալացմանը:

Ատենախոսությունը գրված է հայերեն լեզվով, շարադրված է դասական ձևով, համակարգչային տեքստի 220 էջերում, բաղկացած է ներածությունից, գրականության տեսությունից, հետազոտությունների նյութերի և մեթոդների նկարագրությունից, սեփական հետազոտությունների արդյունքներին նվիրված 3 գլուխներից, ամփոփումից, եզրահանգումներից, գործնական առաջարկություններից և օգտագործված գրականության ցանկից, որը ներառում է 185 աղբյուր հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Աշխատանքը պարունակում է 18 գծապատկերներ և 31 աղյուսակներ:

Հարկ է նշել, որ ատենախոսության մեջ առկա են եզակի ոճաբանական և քերականական սխալներ: Բացի այդ, մեր կարծիքով, "գործնական

